CONCOURS D'ENTREE 2024-2025/ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ 2024-2025

ARMENIEN / ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

17/06/2024

Temps imparti / Ժամանակը: 150 minutes / 150 րոպե
Les dictionnaires ne sont pas autorisés. / Բառարանների գործածումն արգելվում է:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Առաջադրանք 1. (22 միավոր)
1.1. առաջադրանքը գնահատվում է 18 միավոր: Յուրաքանչյուր սխալ կետադրման համար հանվում է 0,5 միավոր, յուրաքանչյուր սխալ ուղղագրության համար՝ 1 միավոր:
1.2. և 1.3. առաջադրանքների ճիշտ պատասխանները գնահատվում են 2-ական միավոր:
Առաջադրանք 2. (14 միավոր)
2.1. առաջադրանքի համար տրվում է 6 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
2.2. առաջադրանքի համար տրվում է 8 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
Առաջադրանք 3. (16 միավոր)
3.1., 3.2. առաջադրանքների համար տրվում է 6-ական միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
3.3. առաջադրանքը գնահատվում է 4 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 2 միավոր:
Առաջադրանք 4. (16 միավոր)
4.1., 4,2 առաջադրանքները գնահատվում են 4-ական միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
4.3. առաջադրանքը գնահատվում է 8 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
Առաջադրանք 5. (12 միավոր)
5.1. և 5.2. առաջադրանքների համար տրվում է 4-ական միավոր. յուրաքանչյուր ամբողջական ճիշտ պատասխան գնահատվում է 2 միավոր:
5.3. և 5.4. առաջադրանքների ճիշտ պատասխանները գնահատվում են 2-ական միավոր:

Յուրաքանչյուր հարակից սխալի համար հանվում է 0,5 միավոր:

Առաջադրանք 1 (22 միավոր)

1.1 Անհրաժեշտության դեպքում լրացնել տառերը և կետադրել բնագիրը (18 միավոր):

Գնացքն անընդhատ օրnրում էր մեզ, և մենք (,)ընդարմացած (,)նստած պատուհանի առջև, նայում էինք գորշ ու լերկ տարածություններին: Երկուսս էլ լուռ էինք, երկուսս էլ տխուր ու մտածկոտ: Մի քանի անշուք ու խղճուկ կայարաններ անցնելուց հետո հասանք Երևան: Ես, որ երազում էի լինել այս քաղաքում, զարմանքից քարացա. ծանր ու ճնշող էր առաջին հայացքից նրա թողած տպավորությունը: Թվում էր՝ ընկել եմ միջնադարը հիշեցնող ասիական մի գորշ քաղաք: Բնակչությունը, սակայն, իսկույն ինձ գրավեց. զգում էի՝ բնoրրանում եմ՝ Հայաստանում: Մարդկանց վարքն ու բարքը ինձ հիշեցնում էր ընդմիշտ կորած մի հայություն, որից սերել էի ես, և որի հիշողությունն ապրում էր սրտիս մեջ:

Ես ինձ ուղեկցող մի խումբ դերասանների հետ դուրս եկա փողոց՝ քաղաքը տեսնելու: Ահա քաղաքի կենտրոնական փողոցը՝ Աստաֆյանը՝ մի քանի հյուծախտավոր ծառերով: Փողոցի երկու կողմերում շարված էին տանելի արտաքինով մի քանի շենքեր, որոնց արան-քից երևում էին կիսախարխուլ տնակներ՝ նեղ ու ցածրիկ դռներով: Այստեղ ու այնտեղ երևացող մի քանի հնoրյա եկեղեցիներ լրացնում էին քաղաքի խղճուկ պատկերը՝ շրջանակ-ված անջրդի ու կանաչազուրկ բլուրներով:

Այսպիսին էր Երևանը, որի կյանքին ծանոթացա:

1.2. Նշել այն շարքը, որի բաղադրյալ հատուկ անունների միայն առաջին բաղադրիչներն են գրվում մեծատառով (2 միավոր):

1. ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԵՐԵՆ, ՆՈՐ ԶԵՅԹՈՒՆ, ԱՌԵՎՏՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
2. ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԺՈՒՅԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ, ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, ՄԵԾ ԵՂԵՌՆ
3. ԲԵՆԳԱԼՅԱՆ ԾՈՑ, ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆ, ՄՈՒՇԵՂ ՍՊԱՐԱՊԵՏ, ՍԱՆ ՖՐԱՆՑԻՍԿՈ
4. ԱՆԳԼԻԱՅԻ ԼՈՐԴԵՐԻ ՊԱԼԱՏ, ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ, ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ, ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1.3. Նշել այն տողը, որի բոլոր բառերի բոլոր բաղադրիչները գրվում են առանձին (2 միավոր):

1) ոչ (օրինական) գործարք, մի (երկու), ալ (կարմիր), երկու (երրորդ), մեն (մենակ)
2) **պար (գալ), տեր (հայր), ձեռք (բերել), ի (հաշիվ), վառ (նարնջագույն)**
3) քաջ (առողջություն), Նյու (Յորք), մինչև (անգամ), ծափ (ու) ծիծաղ, Նոր (Նորք)
4) վերից (վար), ուս (ուսի), Հրազդան (հէկ), ափ (հանել), Սան (Ֆրանցիսկո)

2. Առաջադրանք 2 (14 միավոր)

2. 1. Տրված բառաշարքերից մեկական նախածանց, արմատ և վերջածանց ընտրելով (յուրաքանչյուր բաղադրիչ գործածել մեկ անգամ) ՝ *կազմել վեց ածանցավոր բառ (6 միավոր):*

Հար	ափամերձ	անք	**հարաբերական**
հակ	վերահաս	ական	**հակակրանք**
առ	բացասական	որեն	**առափնյա**
տ	մտաբերել	ուն	**տհաճորեն**
ան	բեռնակիր	յա	**անասելի**
գեր	բարեհաճություն	ելի	**գերհասուն**

2.2. Ընդգծել այն բառերը, որոնցում *ատ* հնչյունախումբն ածանց է *(8 միավոր):*

Հորատել, արգահատելի, մկրատ, գլխատել, անապատ, փայլատ, թշնամատյաց, միջատ, կառամատույց, ծերատ, բաղդատական, բացատ, գանգատ, խրամատային, անարատ, ամենաատելի, աղճատել, քթատ:

Առաջադրանք 3 (16 միավոր)

3.1. Ընտրել և գրել հոմանիշների վեց զույգ (6 միավոր):

Պչրել, երկրպագել, վարանել, խոնջանալ, հայցել, պաշտել, եղծել, ծեքծեքել, հոգնել, տարակուսել, խնդրել, խեղաթյուրել:

պչրել – ծեքծեքել
երկրպագել – պաշտել
վարանել – տարակուսել
խոնջանալ – հոգնել,
խնդրել – հայցել
եղծել – խեղաթյուրել

3.2. Ընտրել և գրել հականիշների վեց զույգ (6 միավոր):

Կասկածամիտ, բուժիչ, աներեր, շնորհաշատ, նկուն, անպաճույճ, խոնարհ, ախտածին, ամբարտավան, անտաղանդ, շքեղ, վստահող:

կասկածամիտ – վստահող

բուժիչ – ախտածին
աներեր – նկուն
շնորհաշատ – անտաղանդ
անպաճույճ – շքեղ
խոնարհ – ամբարտավան

3.3. Գտնել երկու շարք, որոնցում դարձվածքների իմաստների սխալ բացատրություն կա (4 միավոր):

ա) թևաթափ անել – հուսահատեցնել, սուր բարձրացնել – պատերազմ հայտարարել, վերևից նայել – արհամարհել

բ) *հաշվի նստել – վիճել*, իր վրա վերցնել – ստանձնել, ուժ տալ – զորացնել

գ) խելքը հացի հետ ուտել – հիմարանալ, քարավան կտրել - թալանչիություն անել, կոկորդից բռնել - ստիպել

դ) փակուղի մտնել – անելանելի դրության մեջ ընկնել, քար կտրել – ապշել, ցանցը գցել – խաբել

ե) շնչի վրա նստել – սպառնալ, տեղը դնել – փոխարինել, քթի տակ – ցածրաձայն

զ) քիթը քարին առնել – անհաջողության հանդիպել, վարկը գցել – պատվազրկել, մեկը տասը շինել - չափազանցել

Առաջադրանք 4 (16 միավոր)

4.1. Ընդգծել նախադասության մտքին համապատասխանող բառը (4 միավոր):

ա) Երկար ուսումնասիրություններից հետո երիտասարդ գիտնականը ծավալուն (զեկույց, զեկուցում) ներկայացրեց իր աշխատանքի մասին:

բ) (Հրատարակչության, հրատարակության) մեղքով նոր հրատարակված գրքում սպրդել են բազմաթիվ սխալներ:

գ) Նախարարների (մույթերը, մույկերը) տարբերվում էին իրենց գույնով և նախշազարդումներով:

դ) Հայրենասիրության գաղափարը լիովին բացահայտվում է բանաստեղծության առաջին (քառյակում, քառատողում):

4.2. Փակագծերում տրված բառերը տեղադրել նախադասությունների մեջ՝ դրանք ենթարկելով համապատասխան փոփոխությունների (4 միավոր):

Աննան պատմում էր, որ իր(ենց) այգում կարմիր մասրենու մի մեծ թուփ է(ր) եղել, և մասուրի պատրաստած թեյով շատ(երն) են բուժվել:

(ինքը, մասրենի, շատ, լինել)

4.3. Ընտրել և ընդգծել ճիշտ տարբերակները (8 միավոր):

Ֆիդայիններ, նրանք իրենքները, հասկացրի, ոչ մեկերը, մի՛ տատանվի, մեր վրայով, ընդ-դիմախոսներ, չկորես, հօգուտ, կպչի՛ր, բաղաձայններ, հանձինս նրա, մացառաթփեր, թիա-պարտեր, թեզ նման, միանշանակորեն, ըստ ինձ, չդիպա:

Առաջադրանք 5 (12 միավոր)

5.1.Նշել այն նախադասությունները, որոնցում խնդրառության սխալ կա, և ուղղել սխալները (4 միավոր):

ա) Երբ Փարիզում էի, պատիվ ունեցա մի քանի անգամ Ազնավուրին տեսնել*ու* և անգամ լսեցի նրա երգերը:

բ) Որդին լսեց հոր խորհուրդը և բաց չթողեց նրա գործում հմտանալու հնարավորությունը:

գ) Աշխատանքը լիովին բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջները:

դ) Երիտասարդ ֆուտբոլիստը պատրաստվում էր փոխարինել*ու* խաղում վնասվածք ստացած հարձակվողին:

5.2.Նշել այն նախադասությունները, որոնցում համաձայնության սխալ կա, և ուղղել սխալները (4 միավոր):

ա) Զարմանալին այն էր, որ ոչ՛ Անին, ո՛չ Հայկը այդ կղզու բնակիչների մասին ոչինչ չէին լսել:

բ) Երբ գարնան կեսին առատ ձյուն տեղաց, ու դաշտերը ծածկվեցին ծանր սավանի տակ, անհանգստությունն ու ափսոսանքը պատեց*ին* գյուղացիներին:

գ) Մի շարք փաստարկներ պարզաբանելուց հետո հանձնաժողովը որոշեց հարցի լուծումը քննարկել հաջորդ նիստի ժամանակ:

դ)Վահանին՝ որպես հմուտ մասնագետ*ի*, շատ էր հետաքրքրում այդ անվանի գիտնականի կարծիքը:

5.3. Նշել պարզ նախադասությունը բարդ ստորադասականի փոխակերպելու ճիշտ տարբերակը (2 միավոր):

Հավաքված ժողովուրդն սպասում էր նորընծա թագավորի՝ ապարանքից դուրս գալուն:

ա) Հավաքված ժողովուրդն սպասում էր նորընծա թագավորին, որ ապարանքից դուրս գա:

բ) Ժողովուրդը, որ հավաքվել էր, սպասում էր նորընծա թագավորի՝ ապարանքից դուրս գալուն:

գ) Հավաքված ժողովուրդն սպասում էր, որ նորընծա թագավորը ապարանքից դուրս գա:

դ) Հավաքված ժողովուրդն սպասում էր նորընծա թագավորին, որը պիտի ապարանքից դուրս գար:

5.4. Նշել անուղղակի խոսքն ուղղակիի փոխակերպելու ճիշտ տարբերակը (2 միավոր):

Դիմելով մեզ՝ ներկաներիս՝ հարցրեց, թե հավանություն ենք տալիս արդյոք իր ծրագրերին և պատրաստ ենք արդյոք իր հետ համագործակցելու:

ա) Դիմելով մեզ՝ ներկաներիս՝ հարցրեց.

- Հավանությու՞ն եք տալիս իր ծրագրերին և պատրա՞ստ եք իր հետ համագործակցելու:

բ) Դիմելով մեզ՝ ներկաներիս՝ հարցրեց.

- Հավանություն կտայի՞ք իմ ծրագրերին և պատրա՞ստ եք ինձ հետ համագործակցելու:

գ) Դիմելով մեզ՝ ներկաներիս՝ հարցրեց.

- Հավանությու՞ն եք տալիս իմ ծրագրերին և պատրա՞ստ եք ինձ հետ համագործակցելու:

դ) Դիմելով մեզ՝ հարցրեց.

- Ներկանե՛ր, հավանությու՞ն եք տալիս ծրագրերին և պատրա՞ստ եք համագործակցելու: